Տ. ԱՎԵՏԻՍ ԱԲԵՂԱ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(26 նոյեմբերի 2006 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Բայց, խնդրեցէք զարքայութիւն Աստուծոյ եւ այն յաւելցի ձեզ»:

(Ղուկ. ԺԲ 31)

Սիրելի հավատացյալներ,

Ինչպես ասվեց այսօր ընթերցվող Ավետարանում, Հիսուս զգուշացնում է երկու մեղքերից: Առաջին՝ Հիսուս զգուշացնում է մեզ ագահությունից՝ ասելով, որ մեր կյանքը ագահության մեջ չէ և պետք է զգուշանանք նրանից: Եվ երկրորդ՝ հոգսից, մտատանջությունից, որոնք և մեր կյանքի մեծ մասն են կազմում և գրավում: Ղուկասու Ավետարանի այս գլխում նաև ասվում է, թե հավաքվածներից մեկը մոտենում է և ասում. «Վարդապետ, բաժանիր ժառանգությունը իմ և եղբորս միջև»: Փրկիչը սակայն նրան պատասխանում է. «Ով մարդ, ինձ ո՞վ դատավոր կամ բաժանարար կարգեց ձեր վրա» (ԺԲ 14):

Առաջին հայացքից թվում է, թե Հիսուս խույս է տալիս արդարություն գործելուց, որովհետև այդ մարդու խնդրանքը իրականում արդար խնդրանք էր: Հիսուսի խոսքերից սակայն կարող ենք ենթադրել, որ մոտեցող այդ մարդը պետք է կրտսեր եղբայրը լիներ, որովհետև ժամանակի հրեական օրենքի համաձայն ավագ եղբայրը պետք է ստանար մեկ երրորդը, իսկ փոքր եղբայրը՝ երկու երրորդը: Ուստի պետք է ենթադրել, որ մոտեցողը կրտսեր եղբայրն էր: Նա ասում է, թե բաժանիր ժառանգությունը իմ և իմ եղբոր միջև: Այսինքն՝ նա անուղղակի կերպով Հիսուսից խնդրում էր, որպեսզի Հիսուս կողմ լինի իրեն իր եղբոր դեմ, որովհետև անմիջապես Հիսուսի խոսքերն են հետևում. «Տեսեք, որ զգույշ լինեք ագահությունից, որովհետև մարդու կյանքը իր կուտակած հարստության մեջ չէ»:

Առաջին հայացքից թվում է, թե Հիսուս խուսափում է պատասխան տալուց: Իրականում, սակայն, Տերը կանխում է այս մարդու ագահությունը՝ զգուշացնելով նաև առաքյալներին և մնացյալ ներկաներին ագահության ախտից: Այնուհետև Հիսուս տարբեր օրինակներ է վկայակոչում՝ ասելով, որ մարդը չպետք է իր ամբողջ հույսը կապի իր ունեցվածքի հետ, որովհետև այդ ունեցվածքը, որ ինքը այսօր հավաքում և կուտակում է, վաղը կարող է կորստյան մատնվել, և այստեղ է, որ երկնային Տերը մի առակ է պատմում, թե ինչպես մի մեծահարուստի արտերը առատ բերք են տալիս, և այս մարդը սկսում է խորհել իր համար՝ ասելով, թե ահավասիկ կքանդեմ իմ շտեմարանները և ամբարները և ավելի մեծերը կկառուցեմ իմ համար և կասեմ. «Կեր, խմիր և ուրախ եղիր, որովհետև երկար տարիների համար կուտակած բարիքներ և շտեմարանում ամբարած ցորեն ունես» (Հմմտ. Ղուկ ԺԲ 19): Սակայն այդ ժամանակ

Աստված, ի պատասխան նման մտածման, ասում է. «Ով անմիտ, հենց այսօր քո հոգին պահանջելու եմ քեզանից և այդ քո կուտակածը ո՞ւմ է մնալու» (Հմմտ. Ղուկ. ԺԲ 20):

Այստեղ թվում է, թե պետք է զուգահեռներ անցկացնենք Անիրավ տնտեսի առակի հետ, որովհետև տնտեսը նույնպես իր ապագայի մասին մտածեց և հոգ տարավ, որպեսզի աշխատանքից հեռանալուց հետո կարողանա իր կյանքը տնօրինել, սակայն, ի տարբերություն մեծահարուստի, տնտեսն ասում է՝ «իմ ամբարները, իմ շտեմարանները, իմ անձը, իմ հոգին»: Այսպիսով մեծահարուստը անձնասիրությամբ է տառապում: Նրա մտածումներում Աստված տեղ չուներ՝ «իմ ամբարները, իմ շտեմարանները», և իր ամբողջ հույսը դրել էր իր ունեցվածքի վրա: Սակայն այդ ժամանակ Աստված զգուշացնում է նրան՝ ասելով, որ այս գիշեր քո հոգին առնելու եմ, և պարզվում է, որ իրականում հոգին էլ անգամ նրան չէր պատկանում, էլ ուր մնաց ամբարները, շտեմարանները և ցորենը: Եվ այնուհետև Հիսուս ասում է. «Հարստացեք Աստուծով և ոչ թե երկրային ինչքերով»:

Ի՞նչ է նշանակում Աստուծով հարստանալ: Ղուկաս Ավետարանիչը հաջորդ գլխում մի օրինակ է բերում, թե ինչ է նշանակում հարստանալ Աստուծով, և ես կցանկանայի ձեզ համար ընթերցել այս հարցին վերաբերվող Սուրբ Գրային մի քանի հատվածներ. «Վաճառեցեք ձեր ինչքերը և ողորմություն տվեք և ձեզ համար պատրաստեցեք չհնացող քսակներ և անհատնում գանձեր երկնքում, ուր ոչ գողն է մոտենում և ոչ ցեցը փչացնում» (Ղուկ ԺԲ 33), «Երբ Հիսուս լսեց, ասաց նրան. «Դեռ մի բան պակաս է քեզ. ինչ որ ունես՝ վաճառիր և տուր աղքատներին, և երկնքում գանձեր կունենաս, և արի Իմ ետևից»« (Ղուկ. ԺԸ 22): Պողոս առաքյալն էլ այսպես է դիմում հավատացյալներին. «Այս աշխարհի հարուստներին պատվիրիր, որ չհպարտանան և չապավինեն սնոտի հարստությանը, այլ Աստծուն, որ մեզ առատապես ամեն ինչ տալիս է վայելելու համար: Պատվիրիր բարիք գործել, բարի գործերով հարստանալ, լինել առատաձեռն, բարեսեր, իրենց ունեցվածքից ուրիշին էլ բաժին հանել՝ իրենց համար բարի հիմք դնելով հանդերձյալում, որպեսզի ձեռք բերեն ճշմարիտ կյանքը» (Ա Տիմոթ. Զ 17):

Հայտնության գրքի մեջ էլ ասվում է. «Գիտեմ, քո գործերը, դու, որ ոչ սառն ես և ոչ տաք, երանի դու սառը լինեիր և կամ տաք, իսկ դու գաղջ ես, ոչ տաք, ոչ էլ սառը: Հիմա պիտի փսխեմ քեզ բերանից, քանի որ ասում ես. «Հպարտ եմ և առավել հարստացա և ոչ մի բանի կարոտ չեմ». բայց չգիտես, որ ողորմելի ես, թշվառ և աղքատ, մերկ և կույր: Արդ, մի խորհուրդ տամ քեզ. առ, գնիր ինձնից կրակի բովով անցած ոսկի, որ հարստանաս, գնիր սպիտակ զգեստներ, որ հագնես, որպեսզի քո մերկության անվայելչությունը չերևա, և քո աչքերին դեղ դիր, որ տեսնես»« (Հովհ. Գ 15-18): Պողոս առաքյալը մեզ նաև զգուշացնում է, որ հարստությունը, ինչքերի նկատմամբ սերը կռապաշտություն է, և ինչպես որ հեռու պետք է մնանք ամեն մի մեղքից, այնպես էլ պետք է փախչել նաև կռապաշտությունից (Ա Տիմոթ. Զ 9):

Այստեղ կցանկանայի հիշել նաև ավետարանական մեկնիչներից Գեդն Հույսի հետևյալ խոսքերը. «Ամենաաղքատ մուրացիկից ավելի աղքատ է նա, ում ժամանակը եկել է թողնելու այս աշխարհը, որովհետև մեզանից ոչ ոք այս աշխարհը չի թողնում մեր ունեցվածքներով միասին, որովհետև մենք մերկ եկել ենք և մերկ գնում ենք»: Ավետարանական շատ մեկնիչներ, սակայն, մեզ նաև զգուշացնելով ասում են, որ այդ հոգ-

սը, որը կապված է հարստություն կուտակելու հետ, նույնպես սերտաճած է հարստության հետ, և պատահական չէ, որ Հիսուս քարոզում է նաև հոգսի կամ մտատանջության մասին:

Ավետարանական շատ թարգմանություններում ասվում է. «Մի մտածիր վաղվա օրվա մասին» (Մատթ. Զ 34) կամ «Մի մտածիր քո ապագայի մասին»: Ավելի հին հունարեն բնագրերից սակայն երևում է, որ մտածելն այն բառը չէ, որը Հիսուս այստեղ օգտագործում է: Պալիսթեսը կամ հունարեն բառը ավելի շատ նշանակում է զգուշանալ, մտատանջվել, հոգու անձկություն ապրել, որովհետև Հիսուս ոչ թե մեզ խորհուրդ է տալիս անհոգ, ցոփ ու շվայտ կյանք վարել և այնուհետև սպասել, որ Աստված մեզ կերակրի, այլ Հիսուս մեզ զգուշացնում է՝ ասելով. «Չպետք է մտատանջվենք, հոգս անենք, թե Աստված մեզ ինչ է տալու վաղը», որովհետև ինչպես նույն այս հատվածում է ասվում. «Նայեցեք երկնքի թռչուններին, որոնք ոչ սերմանում են՝ ոչ ցանում և ոչ հնձում, սակայն Աստված կերակրում է նրանց» (Հմմտ. Մտթ. Զ 26): Իրականում, սակայն, արդյո՞ք թռչունները չեն աշխատում, արդյո՞ք թռչունները պարապ նստում են և ոչինչ չեն անում, և Աստված կերակրում է նրանց: Ամենևին՝ ոչ. թռչունները աշխատում են ժրաջան կերպով, սակայն թռչունները հոգ չեն անում, չեն մտատանջվում, թե Աստված՝ իրենց սիրելի Տերը, ինչ է տալու վաղը իրենց: Եվ սրանից է, որ Աստված զգուշացնում է մեզ՝ ասելով. «Պաշտպանեցեք ձեզ ագահությունից և հոգսերից, որովհետև Աստված կարող է ձեզ կերակրել»:

Այնուհետև Հիսուս մեզ օրինակ է բերում դաշտի շուշաններին՝ ասելով, որ նրանք ոչինչ չեն անում, սակայն Աստված նրանց հագցնում է, որոնք այսօր կան և վաղը պետք է նետվեն հնոցի կրակի մեջ (տե՛ս Մատթ. Զ 28-30): Եվ նաև դուք մի մտահոգվեք, թե ինչ եք ուտելու կամ ինչ եք հագնելու, որովհետև Աստված կերակրելու է ձեզ: Մատթեոսի ավետարանում նաև ասվում է. «Ապրեք օրվա համար և ապրեք օրով»: Հիշենք և լատինական հայտնի ասացվածքը. «Կարպե տիե»՝ ապրիր օրով: Այն մեզ իրապես սովորեցնում է, որ պետք է ապրենք օրով, քանզի օրվա հոգսերը բավ են օրվա համար: Եթե մենք օրվա հոգսերը թողած մտածենք վաղվա և ապագայի մասին և մտատանջվենք, ընդհակառակն, մեր կյանքից ավելի կպակասեցնենք: Ինչպես ասում է Հիսուս. «Դուք չեք կարող հոգս անելով ձեր հասակին մեկ կանգուն ավելացնել»:

Այստեղ հունարեն բառը, որ նշանակում է հասակ, միաժամանակ նշանակում է նաև կյանքի տևողություն: Եվ իրականում այստեղ նշանակում է կյանքի տևողություն, որովհետև հոգս անելն ավելի պակասեցնում է կյանքի տևողությունը: Եվ հոգսը ոչնչի պետքական չէ և պիտանի չէ մեր հետագա կյանքի համար: Հետևաբար ինչու հոգս անենք, եթե չենք կարող ամենաչնչին բաները փոխել: Դրա համար Հիսուս պատվիրում է, որ հեռու մնանք ամեն տեսակ հոգսերից, և ասում է. «Նախ խնդրեցեք երկնքի արքայությունը և ձեզ ավելիով կտրվի»:

Երկնքի արքայությունը փնտրելը կամ խնդրելը հունարենում նույնպես նշանակում է ուշի ուշով փնտրել, մինչև որ գտնես: Այստեղ Հիսուս անդրադառնում է մարդկային կյանքի իմաստին: Ո՞րն է մարդու կյանքի իմաստը, եթե ոչ՝ սեփական հոգու փրկությունը: Հետևաբար, եթե մենք մեր հավատքով ապավինենք Աստծուն և փնտրենք Աստծու արքայությունը, եթե այն չգտնենք, ապա այդ ժամանակ է, որ Աստված կապահովի մեր ինչքերը, կապահովի մեզ սնունդով ու հագուստով և ամեն բարիքներով, որոնց կարիքը զգում է մարդը այս երկրի վրա: Հետևաբար, սիրելիներ,

այս երկու թեմաները՝ հոգսը և ագահությունը, իրար հետ Հիսուս ոչ պատահական ձևով է միահյուսում, որովհետև ագահությունը չի կարողանում կշտանալ իր ունեցածից, իսկ հոգսը մտածում է, թե ինչպես անի, որպեսզի կարողանա այդ հարստությունը իր մոտ բերել և կուտակել: Եվ այսպիսով երկուսն էլ իրենց հայացքը հեռու են վանում Քրիստոսից, այնինչ Տերն ասում է. «Ինձ մոտ եկեք բոլոր հոգնածներդ և բեռնավորվածներդ, և Ես հանգիստ կտամ ձեզ» (Մտթ. ԺԱ 29):

Այս խոսքերը ուղղված են մեզանից յուրաքանչյուրին: Մեզ թվում է, որ մեր այսօրվա տնտեսական պայմաններում երբ շատերը նյութապես բարվոք վիճակում չեն ապրում, կարիքն է, որ մեզ հոգս է պատճառում, և սա է, որ մեզ հեռացնում է Աստծուց: Սակայն իրականում ունեցվածքն առավել շատ է հոգս պատճառում, ինչպես որ է Հիսուսի բերած օրինակում, երբ հարուստ երիտասարդը մոտենում է Նրան՝ ասելով, թե ես իմ կյանքի բոլոր օրերում պահպանում եմ Քո պատվիրանները: Հիսուս, սակայն, երբ ասում է. «Վաճառիր քո ունեցվաքը և արի Իմ ետևից», այն ժամանակ երիտասարդը հեռանում է տրտմած, ինչպես Ավետարանիչն է ասում, քանզի մեծ հարստություն ուներ:

Այսօր մենք չենք կարող ժխտել, որ մեր ունեցվածքը մեզ հեռու է պահում Աստծուն մոտենալուց: Դրամը, որ ստեղծված է մարդու կյանքը ապահովելու համար, չար կամ բարի չէ, սակայն չարը կամ բարին այն է, թե ինչպես ենք մենք վերաբերվում դրամին: Արդյոք մեր ինչքերը մենք կիսո՞ւմ ենք մեր դրացիների հետ, մեր դիմացինի հետ համաձայն հետևյալ խոսքերի. «Վաստակիր՝ որքան կարող ես, խնայիր՝ որքան կարող ես, և տուր ու բաշխիր՝ որքան որ կարող ես»: Սա է, որ մեր կյանքում պետք է պաշտպանենք, սա է, որ պետք է հիշենք, որ մեր տալով է Աստված մեզ վերադարձնում և ոչ թե կուտակելով, որտեղ որ ցեցերը և գողերը կարող են փոս փորել և գողանալ մեր ունեցվածքը: Եվ Աստծով հարստանալը ոչ այլ ինչ է, եթե ոչ ողորմություն անել, որովհետև ողորմություն տալով է, որ մենք հարստանում ենք Աստուծով: Ողորմությունն է, որ պետք է բարձրաձայն աղաղակի և պաշտպանի մեզ Դատաստանի ժամանակ և Աստծուն մեր առաջ բարեխոս անի, որպեսզի մենք ջնջենք մեր մեղքերը, որ կուտակվել են մեր կյանքի ընթացքում:

Փառք Հիսուս Քրիստոսին այժմ և միշտ և հավիտյանս. Ամեն: